ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1960 Общественные науки

Ս. Մ. Հակոբյան

ԱՄԵՐԻԿՅԱՆ ՄՈՆՈՊՈԼԻԱՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկյան մոնոպոլիստները ակտիվ գործունեություն ծավալեցին Ռուսաստանի էկոնոմիկայում կարևորագույն դիրքեր գրավելու ուղղությամբ։ Ցարիզմը և ժամանակավոր կառավարությունը այդ երևույթը հանդուրժում էին՝ հուսալով, որ այն կօգնի պայքարելու երկրում աճող պրոլետարական ռևոլյուցիայի դեմ, կնպաստի իմպերիալիստական թալանչիական պատերազմը շարունակելուն, ու բացի դրանից, ամերիկյան կապիտալի ներդրումները պետք է ծածկեին Ռուսաստանի՝ ԱՄՆ-ի հետ ունեցած արտաքին առևտրի հաշվեկշռում ամերիկյան ռազմական մատակարարումների հետևանքով առաջացած դեֆիցիտը[1]։ Ցարիզմը և ժամանակավոր կառավարությունը վճարման պարտավորությունները կատարելու միակ միջոցը տեսնում էին ամերիկյան կապիտալի դեպի Ռուսաստան արտահանելու թույլատրման մեջ, ինչպես ուղղակի ներդրումների (արդյունաբերական կապիտալի արտահանում), այնպես էլ փոխառությունների ու վարկերի (վարկային կապիտալի արտահանում) ձևով։ Ամերիկացիները ձգտում էին կապիտալի արտահանման այդ երկու ձևերը իրականացնել ոչ միայն բուն Ռուսաստանի, այլև պատերազմի ընթացքում ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի մարզերի նկատմամբ։ Վերջիններիս նկատմամբ ամերիկյան մոնոպոլիստները գործում էին ոչ թե անմիջականորեն, այլ գլխավորապես իրենց դրածո կազմակերպության միջոցով, որը հայտնի էր Թիֆլիսի ամերիկյան կոմիտե անվամբ։ Այդ կոմիտեի ղեկավար Վիլլովեյ Սմիթը 1917 թ. ապրիլի 17-ին ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռոբերտ Լանսինգին գրում էր. «Առժամեայ կառավարությունը ամէն դիւրութիւն կընծայէ եւ կը քաջալերէ մեր գործը»[2]։

Եթե առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ամերիկյան կապիտալի դեպի Ռուսաստան կատարած էքսպանսիայի հարցը իր լուսաբանումը գտել է մեր պատմագիտական գրականության մեջ[3], ապա այդ կապիտալի Արևմտյան Հայաստան ներթափանցելու հարցը դեռևս մնում է սովե-

---

[1] *Այդ դեֆիցիտը, միայն առաջին ռազմական երեք տարում (1914—1916) կազմում էր ըստ* Summary of foreign commerce the United states *տվյալների 641,5 միլիոն դոլար։*

[2] *«Կոչնակ», Նյու-Յորք, 5 մայիսի, 1917, № 18, էջ 541։*

[3] *Տե՛ս* О. П. Оль, Иностранные капиталы в России. Пгд. 1922, стр. 119—120, 236—237, 276—277; Л. Эвентов, Русско-американские экономические взаимоотношения в прошлом и их перспективы, „Плановое хозяйство", 1925, № 7, стр. 215—220, А. Е. Кунина, Провал американских планов мирового господство в 1917—1920, Москва, 1954, стр. 13—37, г. Андреев, Экспорт американского капитала, М., 1957, стр. 59—75 *և այլն։*

տական պատմաբանների տեսադաշտից դուրս։ Միակ հետազոտությունը, որը նվիրված է այդ շրջանում Հայաստանում ամերիկյան ներկայացուցիչների գործունեությունը մերկացնելուն, դա Ա. Ն. Մնացականյանի «Ամերիկյան ագրեսորների և նրանց գործակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունից» (Ե. 1953) գիրքն է։ Այդ գրքի մեջ հեղինակը իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է ամերիկյան ներկայացուցիչների գործունեության երկու բնագավառների վրա՝ ռազմական լրտեսության և հայերի շրջանում ամերիկյան իմպերիալիստների օգտին շարանենգ քաղաքական պրոպագանդան մերկացնելու վրա։ Ա. Մնացականյանը իր աշխատության մեջ նաև նշում է, որ ամերիկյան գործակալները Հայաստանում, ինչպես և ամբողջ Կովկասում, զբաղվում էին տնտեսական հետախուզությամբ։

Ամերիկացիների այդ գործունեությունը ժամանակին անկատ չի մնացել բոլշևիկյան պարտիայի կողմից։ Մեր պարտիայի ականավոր գործիչները, պարտիական մամուլի պարբերական օրգանները մերկացնում ու անարգանքի սյունին էին գամում ամերիկյան ագրեսորներին։

Վ. Ի. Լենինը բազմիցս նշել է, որ ամերիկյան միլիարդատերերը բոլորից շատ հարստացան պատերազմում, «Նրանք իրենց հարկատուներ դարձրին բոլոր, նույնիսկ ամենահարուստ երկրները։ Նրանք կողոպտեցին հարյուրավոր միլիարդ դոլլարներ։ Եվ ամեն մի դոլլարի վրա երևում են կեղտի հետքեր...»[4]։

Բոլշևիկյան պարտիայի ականավոր ներկայացուցիչ Ալ. Մյասնիկյանը գրել է, որ ամերիկական իմպերիալիստները Հայաստանում հետապնդել են իրենց իմպերիալիստական շահերը. նրանք ամենևին էլ չեն մտածել տառապող հայ ժողովրդին նվազագույն օգնություն ցույց տալու կամ ցավակցելու մասին։ «Փաստը մնում է փաստ, որ բացի թշնամանքից, ամերիկական պաշտոնական յանկիները ոչինչ չտվին հայ ժողովրդին»[5]։

«Զգույշ, խաբում են ձեզ, ընկերներ» վերնագիրը կրող հոդվածում բոլշևիկյան «Կարմիր դրոշակ» թերթը գրել է. «Անգլո-ամերիկական իմպերիալիստները ոչ մի կարիք չունեին և չունեն առանձինն մտածելու, հոգս քաշելու Վանի, Բիթլիսի, Մուշի, Տիգրանակերտի, Երևանի և այլ տեղերի հայերին, քրդերին, թուրքերին (աշխատավոր մասսաներին) կերակրելու, հագցնելու, բժշկելու մասին։ Ոչ, այդ նրանց ըսկի էլ չի հետաքրքրում։ Եվ եթե պատահի, որ հետաքրքրություն ցույց տան, ապա պիտի իմանալ, որ դրա տակ ծածկված են իրանց իսկ դասակարգային՝ տնտեսական թե քաղաքական այս կամ այն շահը, օգուտը»։ Ամերիկյան իմպերիալիստները եկել են «...Հայաստանի հայ, քուրդ, եզդի, ասորի, հույն աշխատավոր մասսաներին վերջնականորեն կործանելու և նրանց ավերակների վրա կանգնելու բուրժուազիայի շահերի պաշտպան...»[6]։

«Բանվորի կռիվ» թերթը ԱՄՆ-ը անվանել է միլիարդատերերի և իմպերիալիստների տիպիկ հայրենիք[7]։

---

[4] Վ. Ի. Լենին, Երկեր, հրատ. 4, հատոր 28, էջ 59։
[5] Ա. Ն. Մնացականյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Ե., 1955, էջ 247։
[6] «Կարմիր դրոշակ», Մոսկվա, 1 հունիսի, 1919, № 3, էջ 2—3։
[7] «Բանվորի կռիվ», Թիֆլիս, 1918, № 7, էջ 3։

«Կարմիր բանվոր» թերթը գրում էր, որ Ամերիկայի, Ֆրանսիայի և Անգլիայի հաստատոր կապիտալիստների կառավարությունների նպատակը ամենևին էլ հայ ժողովրդին օգնելը չէ, այլ նրա ծանր դրությունից օգտվելը։ Նրանց ձեռնտու է, մատնանշում էր թերթը, երբ ժողովուրդները տառապում են, այնժամ հեշտ է շահագործել նրանց։ «Մինչև հիմի,— հանրամատչելի ձևով բացատրում էր թերթը,— հայ գյուղացի ժողովուրդը, օրինակի համար ասենք՝ ոչխար էր, իսկ Տաճկաստանի սուլթանների ու փաշաների տերությունը մի կատաղած գայլ։ Այս գայլը բռնել էր այս ոչխարին, կրծոտում, ուտում էր։ Եվ այս ոչխարը միանգամից կուլ պիտի գնար գայլին և արդեն մասամբ կուլ գնաց, բայց անգլիացի և ամերիկացի սարդերը, որ ավելի հեռատես ու խորամանկ են, մտածում են թե՝ ախր այս ոչխարը ինչի գայլի փորին կուլ գնա, ափսոս է. նա կը ծնի, գառներ կունենա, կաթն էլ կը կթենք, կը խմենք, պանիր կը շինենք—, յուղ կը շինենք»[8]։

Արևմտյան Հայաստանում ամերիկյան գործակալների գործունեությունը քննարկելիս մենք ելնում ենք այս միակ ճիշտ բոլշևիկյան գնահատականներից։

Թուրքական կառավարող շրջանները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, իրենց դաշնակից գերմանական իմպերիալիստների հրահրմամբ ոչնչացրին մոտ մեկ միլիոն հայ և այդքան էլ աքսորեցին Միջագետքի անապատները։ Թուրքական կառավարողները իրականացնում էին իրենց վաղեմի իղձերը. Հայկական գավառներից՝ Էրզրումի, Սվազի, Բիթլիսի, Վանի, Դիարբեքիրի, Խարբերդի վիլայեթներից հայ բնակչությանը արտաքսելով, այդ գավառները դարձնում էին զուտ մահմեդական բնակչություն ունեցող վայրեր։

Մյուս կողմից, սակայն, պատերազմի ընթացքում ռուսական զորքը քայլ առ քայլ գրավում էր Արևմտյան Հայաստանի տերիտորիան և արդեն 1917 թվականի վերջին Արևմտյան Հայաստանի դգալի մասը՝ Էրզրում, Մուշ, Բիթլիս, Վան և այլ քաղաքների հետ միասին, մաքրված էր թուրքական զորքերից։ Այդ տերիտորիայում, ինչպես նաև Կովկասում գտնվում էին 300 հազար գաղթական հայեր։ Ռուսական զորքերի կողմից գրաված մարզերի վրա աչք էին դրել ոչ միայն ցարական սատրապները, այլև անգլո-ֆրանսիական ու ամերիկյան իմպերիալիստները։

Ամերիկյան իմպերիալիստները Արևմտյան Հայաստանով հետաքրքրվում էին առաջին համաշխարհային պատերազմից դեռևս շատ առաջ։ Նրանց գործակալությունը, ի դեմս ամերիկյան միսիոներական կազմակերպությունների, արևմտահայերի շրջանում գործում էր սկսած 1835 թվականից։ Միսիոներական կազմակերպությունները կոչված էին նախապատրաստելու ԱՄՆ-ի տնտեսական ու քաղաքական ներթափանցումը Արևմտյան Հայաստան։

Միսիոներական այդ կազմակերպությունները գտնվում էին ԱՄՆ-ի կառավարության հովանավորության ներքո, որը նյութական օժանդակություն էր ցույց տալիս նրանց և միաժամանակ ձգտում էր ձեռք բերել ամեն տեսակի արտոնություններ այդ կազմակերպությունների համար։ Դրանց անմիջական ղեկավարությունը իրականացվում էր «օտարերկրյա միսիաների լիազորների ամերիկյան բյուրոյի» կողմից (կրճատ՝ «Բորդ»), որի կենտրոնը

[8] «Կարմիր բանվոր», Ասորախան, 18 մայիսի, 1919, № 7, էջ 1։

գտնվում էր Բոստոնում։ ԱՄՆ-ի կառավարությունը ամերիկյան միսիոներներին օգտագործում էր արևմտահայերի ազգային-ազատագրական աճող շարժումը ճնշելու համար։ Միսիոներները, ջանում էին հայերի մեջ թշնամական զգացմունքներ սերմանել Ռուսաստանի նկատմամբ[9]։ Իր իսկական դեմքը թաքցնելու համար միսիոներական գործունեությունը սովորաբար ընդունում էր քողարկման նուրբ, կատարելագործված ձևեր՝ (զսլրոցների, գրադարանների, մանկատների, հիվանդանոցների և այլնի կազմակերպում)։ Չնայած այդ, կարծիք թե, ծախսեր պահանջող միջոցառումներին, միսիոներականությունը, սակայն, եկամտի աղբյուր էր, որովհետև միսիոներներին հետևում էին վաճառականները կամ թե հենց իրենք միսիոներները զբաղվում էին առևտրով և հիմնում զանազան բնույթի եկամտաբեր ձեռնարկություններ։

Այսպես օրինակ, Խարբերդում ամերիկացիները ստեղծել էին արհեստանոցներ, որտեղ շահագործվում էր հազարավոր հայ որբերի աշխատանքը։ Այդ նույն քաղաքում ամերիկացիները բացել էին արևելյան գորգերի գործարան, որի արտադրանքը, շնորհիվ հայ գորգագործ կանանց հմուտ ձեռքերի, պարսկականից ավելի բարձր էր գնահատվում, և մեծ եկամուտ բերում գործարանի տերերին։ Զարմանալի չէ, որ 1910 թվականին արդեն ամերիկացիները ձգտում էին մեկի փոխարեն ստեղծել ութը նման գործարան։ Խարբերդում էր գտնվում նաև ամերիկացի Վ. Տ. Ֆուշի կողմից վարկավորվող կահույքի գործարանը[10]։ Միսիոներ Մարտենը Հաջնում (այժմ Սաիբ-Բեյլի) կառուցեց կահույքի և գորգերի երկու մեծ գործարան։ Այդ գործարանների արտադրանքը իրացվում էր Եվրոպայում ու Ամերիկայում, և նույնիսկ անգլիական թագուհի Վիկտորիան այդ ապրանքների գնորդներից էր[11]։ Վանում ամերիկյան միսիոներները հիմնադրել էին նուրբ ժանյակների արհեստանոց, որում աշխատում էին 80 բանվորուհիներ։ Այդ ժանյակները վաճառվում էին ուղարկվում Ամերիկա, Անգլիա և Գերմանիա։

Վանում միսիոներներն ունեին նաև գորգագործական արհեստանոց[12]։

Միսիոներների այդպիսի գործունեության շնորհիվ նրանց բյուջեի եկամուտները միշտ գերազանցում էին նրա ծախսերը։

Միսիոներները նպաստում էին արևմտա-հայկական շուկան ամերիկյան ապրանքների կողմից նվաճելու գործին։ Նախապատերազմյան տարիներին միայն Վանի վիլայեթում երևացին ամերիկյան հետևյալ ապրանքները՝ ձուլածո արծաթ, քիմիական նյութեր, դեղագործական ապրանքներ, կրկնակոշիկներ։ Իսկ Վանի վիլայեթից ԱՄՆ էին արտահանվում արծաթյա իրեր, մորթեղեն[13] և այլն։

Վանում ռուսական փոխ-հյուպատոս Օլֆերևը 1910 թվականի հուլիսի 27-ին Կոստանդնուպոլսի դեսպան Զարիկովին զեկուցում էր. «Միսիոներները համառ կերպով աշխատում են տեղական շուկայի ուսումնասիրման ուղղությամբ... եթե նախկինում Վանում չէր կարելի հանդիպել ամերիկյան ֆաբրիկատների, ապա այժմ դեղագործական ապրանքների մեծ մասը այս-

---

[9] Տե՛ս Վրաց ՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 71, ցուցակ 2, գործ 76, թերթ 70։

[10] Տե՛ս Մ. Դ. Ձիրմեհէան, Խարբերդ և իր գավառները, Ֆրեզնո, էջ 376—377։

[11] Տե՛ս Ց. Պ. Պողոսէան, Հաճընի ընդհանուր պատմութիւնը, Լոս Անճելես, 1942, էջ 393։

[12] Տես՝ Վրաց ՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 71, ց. 2, գ. 56, թթ. 174—175։

[13] Նույն տեղում, ֆ. 521, ց. 2, գ. 492, թթ. 76—77, 267, 269։

տեղ է գալիս Ամերիկայից... Ամերիկացիները համառորեն ձգտում են համոզել տեղական բնակչությանը Ամերիկայից երկրագործական մեքենաներ դուրս դրելու համար»[14]։ 1911 թվականի մայիսի 4-ին նույն Օլֆերևը զեկուցում էր. «Շնորհիվ նրանց (այսինքն միսիոներների— Ս. Հ.) ջանքերի, Անատոլիայի թուրքական շուկաներում ավելի ու ավելի շատ են երևում ամերիկյան ֆաբրիկատներ»[15]։

Ամերիկացիները լուրջ հետաքրքրություն էին ցուցաբերում Վանի և Էրզրումի վիլայեթների նավթահանքերի նկատմամբ[16]։ 1911 թ. սեպտեմբերի 5-ին Օլֆերևը Զարիկովին գրում էր. «Իմ ուղևորության ժամանակ ես իմացա, որ երկու ամերիկացիներ ...մի քանի օր բնակվել են Կորցոտ գյուղում, և հետազոտել են այնտեղի նավթը։ Նրանք գյուղացիներին ասել են, որ իրենք Ֆուսդ-փաշայից վերագնել են նավթը շահագործելու իրավունքը և որ եկող գարնանից կսկսեն նավթ արդյունահանել Կորցոտի շրջակայքում[17]։

Արևմտյան Հայաստանը տնտեսապես ստրկացնելու ամերիկյան պլաններում պակաս դեր չպետք է խաղար Զեստերի կոնցեսիան։ 1908 թվականից սկսած ամերիկյան ծովակալ Կոլբի Միտչել Զեստերը բանակցություններ էր վարում թուրքական կառավարության հետ՝ Օսմանյան կայսրության արևելյան մասում երկաթուղու ընդարձակ ցանց կառուցելու համար կոնցեսիա ստանալու վերաբերյալ։ Կառուցվելիք երկաթուղու կարևորագույն ճյուղերը երկու ուղղությամբ (Սվազ-Էրզինջան-Էրզրում-Բայազետ և Սվազ-Խարբերդ-Դիարբեքիր-Բիթլիս-Վան) պետք է անցնեին Արևմտյան Հայաստանով[18]։ Զեստերը ձգտում էր առափնյա նավարկության իրավունք ստանալ Վանա լճում։ Կոստանդնուպոլսի թերթերը հաղորդում էին, որ Օսմանյան կառավարությունը բանակցություններ է վարում ամերիկյան սինդիկատի ներկայացուցչի հետ՝ Վանից դեպի Սարայ տանող երկաթուղի կառուցելու հարցի շուրջը[19]։ Զեստերի ընկերության ապագա երկաթուղիների անցման վայրերի հետ ծանոթանալու նպատակով 1910 թվականի օգոստոսի սկզբին Խարբերդ և Դիարբեքիր եկան ինժեներների խմբեր, ամերիկյան ընկերության ներկայացուցիչ Գոլդի գլխավորությամբ։ Դիարբեքիրից ամբողջ խումբը Բեշիրիի վրայով մեկնեց Բիթլիս[20]։

Առաջին համաշխարհային պատերազմից առաջ Արևմտյան Հայաստանում ամերիկյան գործակալների գործունեության ակտիվացման կապակցությամբ ԱՄՆ-ը արդեն չէին բավարարվում միայն հին հյուպատոսություններով, որոնք գոյություն ունեին Էրզրումում (1839 թվականից), Բիթլիսում (1856 թվականից) և Վանում (1871 թվականից)[21]։ Նրանք ընդարձակում են

---

[14] Նույն տեղում, 272, 273։

[15] Նույն տեղում, ֆ. 71, ց. 2, գ. 56, թ. 175։

[16] Տե՛ս А. Попов, Вступление Америки в войну, „Историк-марксист", 1928 № 7, стр. 57.

[17] ՎրացՍՍՌ, ԿՊՊԱ. ֆ. 71, ց. 2, գ. 56, թ. 247։

[18] Տե՛ս Զեստերի կոնցեսիայի քարտեզը Մ. Պավլովիչի „Империализм и борьба за великие железнодорожные и морские пути будущего" գրքում, Ленинград, 1925, стр. 115.

[19] Տե՛ս ՎրացՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 85։

[20] Նույն տեղում, ֆ. 71, ց. 2, գ. 50, թթ. 75—76։

[21] Տե՛ս Липч, Армения, т. 2, Тифлис, 1910, стр. 119, 197, 276.

իրենց հյուպատոսական ցանցը, նոր հյուպատոսություններ բացելով Սվազ և Խարբերդ քաղաքներում[22]։

Ռուսական զինվորական իշխանությունը, որը պատերազմի ընթացքում հաստատվում էր Արևմտյան Հայաստանում, ամենևին էլ այնպես բարյացակամ չէր վերաբերվում միսիոներների գործունեությանը, ինչպես նախկին՝ թուրքական իշխանությունը։ Դրա համար էլ ամերիկյան գործակալները ստիպված էին հարմարվել նոր իրադրություններին։

Ռուսական զորքերի առաջխաղացման պայմաններում ԱՄՆ-ի տնտեսական ու քաղաքական ներթափանցումը Արևմտյան Հայաստան նախապատրաստելու համար, Ամերիկայում ստեղծվեցին արևմտահայերի գործերով զբաղվող նոր կազմակերպություններ, որոնք արտաքնապես բարեգործական ընկերությունների տեսք ունեին։ Այդ կազմակերպություններից առավել նշանավոր էր այսպես կոչված, «Հայերի, սիրիացիների օգնության ամերիկյան կոմիտեն», որը հիմնադրվեց 1915 թվականի սեպտեմբերին Նյու-Յորքում՝ ամերիկյան միսիոներների ակտիվ մասնակցությամբ։ Այդ կոմիտեի դրամական միջոցները կազմվում էին այն գումարներից, որ ստացվում էին «հայկական կոտորածների» շուրջը կատարվող սպեկուլյացիայից (ԱՄՆ-ի քաղաքներում տարածվում էին թռուցիկներ և բրոշյուրներ, կազմակերպվում էին միտինգներ, խոսվում էր թշվառությունների մասին, հանգանակում էին նվիրատվություն Ամերիկյան քաղաքացիներից)։ Կոմիտեի ֆինանսավորման գործին մասնակցում էին նաև ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի այնպիսի պարագլուխներ, որպիսիք էին միլիոնատեր Ռոկֆելերը և կապիտալիստ Կլիվլենդ Թաջը։ Նյու-յորքյան կոմիտեի գործերին ուղղություն էին տալիս խոշոր վաճառականներ Օսկար Ստրաուզը, Ռաբբի Ուայզը և ուրիշները։ Ուշագրավ է, որ 1917 թվականի օգոստոսից այդ կոմիտեի գանձապահն է դառնում ինքը՝ Կ. Թաջը։

Ամերիկյան մոնոպոլիստական կապիտալի բուժիները Նյու-յորքյան կոմիտեի ֆոնդերում ինքնին հատկանշական փաստ է։ Հանրահայտ է, որ ամերիկյան միլիարդատերերը, երբեք ոչինչ ձրի չեն տալիս։ «Բոլորը գիտեն,— ասում է Ն. Ս. Խրուշչովը,— որ իմպերիալիստները երբեք և ոչ ոքի զուր տեղը, հենց այնպես, «զեղեցիկ աչքերի համար», փող չեն տալիս, նրանք իրենց կապիտալները ներդնում են միայն այն ձեռնարկումներում, որոնցից հույս ունեն, որ լավ շահույթներ կստանան»[23]։

Արևմտահայ բնակչությանը անշահախնդիր օգնություն կարող էին ցույց տալ միայն ԱՄՆ-ի աշխատավոր մասսաները, և նրանք իրոք ցույց էին տալիս նման օգնություն։ Այսպես օրինակ, ամերիկահայ բանվորները 1915 թվականի ընթացքում հավաքեցին 100.000 դոլլարից ավելի՝ արևմտահայերի օգտին։ Սակայն, դժբախտությունն այն էր, որ ամերիկյան, ինչպես և եվրոպական բանվորները, չմանեին իրենց առանձին կազմակերպությունները հայ բնակչությանը անշահախնդիր օգնություն ցուցաբերելու համար։ ԱՄՆ-ի աշխատավորներից հավաքած միջոցները հոսում էին նույն նյու-յորքյան կոմիտեի կամ նման կազմակերպություններին դրամարկղները և օգտագործվում վերջիններիս շահերին համապատասխան։

---

[22] ՀՍՍՌ, ԿԳԳԱ, ֆ. 113, ց. 5, գ. 135, թ. 2։

[23] «Սովետական Հայաստան», 7 հունիսի, 1958, № 131, (11333)։

ԱՄՆ-ում արևմտահայերի գործերով զբաղվող կազմակերպություններից էր նաև «Հայերին բժշկական օգնություն ցույց տվող ամերիկյան ընկերությունը», որը հիմնադրվել էր 1915 թվականի սեպտեմբերի 29-ին Նյու-Յորքում։ Այդ կազմակերպությունը, սակայն, ավելի շատ էր զբաղվում քաղաքական, քան բժշկության հարցերով։ Այդ կազմակերպության ղեկավարների նամակում, ուղղված ԿԱԲՈ-յի[24] նախագահին, ասվում էր. «Թեպետև մեր կազմակերպությունը չի զբաղվում քաղաքական և ռազմական հարցերով, այնուամենայնիվ մենք ցանկանում ենք ունենալ ստույգ տեղեկություններ Կովկասում գործող բոլոր կոմիտեների ու կազմակերպությունների մասին, որոնք քաղաքական և ռազմական ծառայություններ են մատուցում հայ ժողովրդին»։ Նամակով պահանջում էր՝ տալ ստույգ և մանրամասն տեղեկություններ այն անձանց, կոմիտեների և կազմակերպությունների գործունեության մասին, որոնք արևմտահայերի շրջանում զբաղվում են բարեգործությունով, լինեն դրանք հայկական կամ օտարազգի[25]։

Այն բանը, որ հիշյալ ընկերությունը զբաղվում էր քաղաքական և տնտեսական հարցերով, վկայում է նրա ներկայացուցիչների գործունեությունը բուն Կովկասում։ Ընկերության գլխավոր ներկայացուցիչ Ուիլյամ Քրեսոնը Պետրոգրադում եղել է ամերիկյան դեսպանության խորհրդատու, իսկ 1916 թվականի հուլիսից նշանակվում է ԱՄՆ-ի փոխհյուպատոս Թիֆլիսում։ Այդ ընկերության անդամ Հովսեփյանը ամերիկյան ներկայացուցիչ էր «Հայաստանի վերիշխանության հանձնաժողովում» և այլն։

ԱՄՆ-ի կառավարությունը և արևմտահայերի գործերով զբաղվող ամերիկյան կազմակերպությունները իրենց ներկայացուցչությունը ունեին նաև Թիֆլիսում, որը հայտնի էր «Ամերիկյան կոմիտե» անվամբ։ Կոմիտեն գործում էր Թիֆլիսում Ամերիկայի Միացյալ Նահանգների հյուպատոս Վիլլովեյ Սմիթի անմիջական ղեկավարությամբ։ «Ամերիկյան կոմիտեի» նախագահն էր քահանա Մակկալմը[26]։ Նախագահը և կոմիտեի մյուս 8 անդամները «Բորդ» կազմակերպության անդամներ էին։ Կոմիտեի անդամներ՝ Մակկալմը, Գրեյսը, Հիլլը, Վիլսոնը, Յաբոն, Մայնարդը, Բայնոլդսը և ուրիշներ միսիոներական գործունեության երկարամյա փորձ ունեին։ Հանդիսանալով ամերիկյան իմպերիալիզմի հավատարիմ սպասարկուներ, նրանք միևնույն ժամանակ լավատեղյակ էին արևմտահայ կյանքին, իսկ նրանցից շատերը տիրապետում էին հայերենին։ Թիֆլիսի Ամերիկյան կոմիտեն արտահայտում էր ամերիկյան միսիոներական և բարեգործական կազմակերպությունների, ամերիկյան մոնոպոլիաների ու ԱՄՆ-ի կառավարության շահերը։ Ամերիկյան կոմիտեն գլխավորող հյուպատոս Սմիթը ԱՄՆ-ի կառավարության պաշտոնական ներկայացուցիչն էր, որի հրամաններով ու կարգադրություններով պետք է գործեին ամերիկյան բոլոր ներկայացուցիչները Կովկասում և Արևմտյան Հայաստանում։

Ամերիկյան կոմիտեի անդամները Կովկաս եկան 1915 թվականի վերջին ու 1916 թվականի սկզբին և սկսեցին իրենց ուղևորությունները արևմտահայ գաղթականների տեղավորման շրջաններում։ Այդ բոլոր ուղևորությունները ամերիկյան էմիսարները կեղծավորարար քողարկում էին բարեգործական

---

[24] ԿԱԲՈ—КАБО (Кавказское Армянское Благотворительное общество).

[25] ՀՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 28, ց. 1-ին, գ. 545, թ. 45 (անգլերեն լեզվով)։

[26] Տե՛ս Վրաց ՍՍՌ, ԿՊՊԱ ֆ. 520, ց. 1-ին, գ. 162, թ. 171։

ցուցափեղկով և աչքակապության համար երբեմն իրոք այս ու այնտեղ բաշխում էին շնչին քանակությամբ պարեն և հանդերձանք։

Սակայն ամերիկյան ներկայացուցիչների այդ բարեգործությունը ինքնանպատակ չէր. դեռ ավելին, շատ տեղերում նրանք հայ գաղթականներին պարզապես օգնություն չէին ցույց տալիս։ Այսպես օրինակ, Դիլմանից, հեռագրում էին ԿԱԲՈ-ի նախագահին, որ ամերիկյան միսիան հրաժարվում է հայերին օգնություն ցույց տալուց[27]։ Նման բողոքներ ստացվում էին և շատ այլ վայրերից։

Ամերիկյան կոմիտեի գլխավոր խնդիրն էր՝ հող նախապատրաստել ամերիկյան կապիտալի Արևմտյան Հայաստան ներթափանցման համար։ Այդ նպատակով Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները արևմտահայ գաղթականների կուտակման շրջաններում հիմնում էին ամերիկյան գործարաններ ու արհեստանոցներ, որտեղ շահագործում էին գաղթականների էժան աշխատուժը։ Արևմտահայ գյուղացիներին իրենցից տնտեսապես կախման մեջ դնելու համար, վարկով գյուղատնտեսական գործիքներ էին բաց թողնում, ֆինանսավորում այսպես կոչված «Վանի միլիցիան», պաշտպանում Պետրոգրադում հայ-ամերիկյան բանկի հիմնադրման գաղափարը, ձգտում ուժեղացնել ամերիկյան ազդեցությունը հայ բուրժուա-նացիոնալիստական, գաղթականական, բարեգործական և այլ կազմակերպությունների վրա։

Երևանում ամերիկացիներն ունեին մանածագործական, բամբակագործական, շալեր արտադրող ֆաբրիկաներ, ծածկոցների, հագուստեղենի, ատաղձագործական և կոշկեղենի արհեստանոցներ։ Մանածագործական ֆաբրիկայի մասին, որը բացվել էր 1916 թվականի աշնանը, Ռայնոլդսը 1917 թվականի փետրվարի 6-ին գրում էր. «Իրաւ է, մենք ունինք պզտիկ գործատեղի մը, ուրկէ աւելի քան հազար կիներու բուրդ կուտանք մանելու եւ գուլպաներ հիւսելու, բայց անդին կան դեռ հազարաւորներ որ կը խնդրեն ունենալ միեւնոյն պատեհութիւնը, բայց մեր դրամագլուխը թոյլ չի տար մեզ առ այժմ աւելի ընդարձակելու մեր գործը»[28]։ Բամբակագործական ֆաբրիկայում աշխատում էին 300 կին, իսկ 50 տղամարդ որպես վերակացուներ։ Այդ ֆաբրիկան կառավարում էին Յարոն և Ռայնոլդսը։

Մայնարդի կողմից 1916 թ. հիմնադրվեց Մանածագործական մի ֆաբրիկա Ալեքսանդրապոլում, որը 1917 թ. փետրվարին արդեն ուներ 700 բանվոր և բանվորուհի. իսկ մայիսին բանվորների թիվը հասավ մինչև 1140 մարդու[29]։

1917 թ. ամերիկացիները արհեստանոցներ հիմնեցին Օշականում[30], Էջմիածնում[31], Ղամարլուում[32], որտեղ աշխատում էին գաղթականներ։

1917 թ. ամռանը Էրզրումում նախկին ամերիկյան հյուպատոս Ռոբերտ Ստայսլտոնը բաց արեց ֆաբրիկա, որտեղ աշխատում էին 100 մարդ։ Ֆաբրիկան էժանագին գործվածքեղենից և կաշուց[33] արտադրում էր հագուստեղեն

---

[27] Տե՛ս ՀՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 239, դ. 22, թ. 14։

[28] «Կոչնակ», 10 մարտի, 1917, № 10, էջ 319։

[29] Նույն տեղում, 12 մայիսի, 1917, № 19, էջ 604։

[30] «Վան-Տոսպ», 1917, № 16, էջ 11։

[31] «Կոչնակ», 18 օգոստոսի, 1917, № 33, էջ 1006։

[32] Նույն տեղում, 15 դեկտեմբերի, 1917, № 50, էջ 1492։

[33] Ե. Սիրաբ, «Տեղեկություններ կարնից», «Վան-Տոսպ», 1917, № 38, էջ 14։

և կոշկեղեն։ Ամերիկացի Հենրի Ռիկդր Խարբերդում հիմնեց բամբակագործական ֆաբրիկա, որտեղ աշխատում էին մոտ 200 գաղթական կին[34]։ Ամերիկացիները ունեին նաև իրենց բաժինը արևմտահայ արհեստանոցներ հիմնադրելու համար ստեղծվող կապիտալում։ «Վանի կանանց միության» արհեստանոցի կապիտալում, օրինակ, Մակկալմը, անգլուհի Ռոբինզոնի հետ միասին, ուներ իր որոշակի փայը։ Ամերիկացիները, բացի դրանից, վարկավորում էին արևմտահայ առևտրականներին ու արհեստավորներին։ Գրեյսից վարկ ստացած արհեստավորների թիվը հասնում էր մոտ 125 հոգու[35]։

Արդեն գոյություն ունեցող ամերիկյան ֆաբրիկաները ու արհեսանոցները ընդարձակելու և նորերը հիմնադրելու նպատակով 1917 թ. օգոստոսին Կովկաս եկան ամերիկյան երկու նոր ներկայացուցիչներ՝ Իլլիսը և Պերին։

Թիֆլիսի Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները իրենց հերթին անընդհատ ահագանգում էին Նյու-Յորք, որ իրենց լրացուցիչ մարդ և դրամ ուղարկեն։ 1917 թվականի նոյեմբերի 19-ին Յարոն, Ռայնոլդսը, Գրեյսը, Մայնարդը, Սմիթը հեռագրում են Ամերիկա. «Արդէն եկողներէն զատ անմիջապէս ղրկեցէք նաեւ էրեք հայախոսները, որ կարենան կացութեան հետ գլուխ ելնել»[36]։ 1917 թվականի նոյեմբերի 30-ին Սմիթը հեռագրում է Ամերիկա. «Կը թելադրում նաեւ որ ընդարձակուին մեր հանդերձեղէն արտադրող գործարանները, այնպէս որ փոխանակ վեց հարիւր ձեռքի կարելի ըլլայ շինել երկու հազար ձեռք եւ ասով հայթայթուի աշխատանք ուրիշ հազար մարդոց ալ։ Մեր պիտոյքներէ աւելացած հանդերձները կարելի է ծախել իր արտադրութեան արժէքովը բանակին, որ այս գաւառին արտադրութիւնը գնել պարտաւորած է։ Առաջիկա ձմեռուան համար, Նիւ Եորքի Յանձնախումբին արդէն խոստացածէն զատ, պետք ունինք ամսական երկու հարիւր հազար տոլարի, և 100.000 ալ հարկ է գործարանները ընդարձակելու գործին համար։ Ես անձնապէս կը յանձնարարեմ որ ղրկեք հոս Նեսպիթ Ջեմպլրոս եւ հանդերձեղէն ձեռարուեստող չորս փորձ վարպետներ»[37]։ Սմիթի և նրա գործակիցների այս պահանջները ըստ պատշաճի հաշվի էր առնվում Նյու-Յորքում։ 1917 թվականի վերջին հանդես են գալիս ամերիկյան նոր ներկայացուցիչներ՝ Պարտրիջը և Կոմպտենը Ալեքսանդրապոլում, Էլմերը՝ Էջմիածնում, Ուայտը՝ Երևանում, Ջեյմսը՝ Նոր Բայազետում և Ախտայում, Ուիլյամսը՝ Վանում։ Իսկ երբ ամերիկացիներին հարկավոր էր հումք հայթայթել ամերիկական ֆաբրիկաների և արհեստանոցների համար, ապա նրանք գրեթե միշտ կովկասյան իշխանություններից ձեռք էին բերում արտահերթ հայտեր երկաթուղային վագոնների համար[38]։

Ամերիկյան կոմիտեն հող էր նախապատրաստում նաև Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսության մեջ ամերիկյան կապիտալի ներթափանցման համար։ 1916 թվականի մարտի 9-ին Վիլսոնը հայտարարեց, որ Ամերիկյան կոմիտեն մշակել է իր հետագա գործունեության ծրագիրը Արևմտյան Հայաստանում և հատկապես Վասպուրականում[39]։ Այդ ծրագրին համապատաս-

---

[34] Մ. Ղարիպ, «Տեղեկություններ Խարբերդեն», «Վան-Տոսպ», 1917, № 21։

[35] «Վան-Տոսպ», 1917, № 13, էջ 14։

[36] «Կոչնակ», 15 դեկտեմբերի, 1917, № 50, էջ 1492։

[37] Նույն տեղում։

[38] Տե՛ս ՎրացՍՍՌ, ԿՊՊԱ, ֆ. 520, գ. 1-ին, գ. 162, թ. 36 և այլն։

[39] Տե՛ս „Армянский вестник", 10 апреля, 1916, № 11, стр. 19.

խան՝ ամերիկացիները ձեռք էին բերել 175.000 դոլլարի բանող և այլ անասուն՝ վարկով արևմտահայ գյուղացիներին բաժանելու համար։ Վարկային և այլ օպերացիաներ անցկացնելու համար Վիլսոնը և Գրեյսը դեռևս 1915 թվականի վերջին մեկնեցին Վան։ 1916 թվականի հուլիսին այստեղ եկան նաև Ռայնոլդսը և Յարոն։ 1916 թվականի ապրիլին Վան մեկնեց նաև Մայնարդը։ Այստեղից նրանք ուղևորություններ էին կատարում Վասպուրականի շրջանները։

Ամերիկացիները արևմտահայ գյուղացիներին վարկով տալիս էին գյուղատնտեսական գործիքներ[40]։ Այն շրջաններում, որտեղ ամերիկացիներին զանազան հանգամանքների հետևանքով չէր հաջողվում անմիջական կերպով իրենց վարկերը արևմտահայ գյուղացիների վզին փաթաթել, այնտեղ նրանք գործում էին հայ բուրժուական կազմակերպությունների միջոցով։ Օրինակ, ամերիկացիները արևմտահայ գյուղացիներին որոշակի գումարի վարկ էին բաց թողնում 4 տարի ժամկետով «Հայաստանի վերաշինության Հանձնաժողովի» միջոցով։ 1916 թվականի գարնանը ամերիկյան կոմիտեն վարկով Հայոց-Ձորի գյուղացիներին բաց թողեց 500 եզ և սերմացու 10.000 ռ. դումարով, իսկ ամբողջ Վանի մարզում վարկով տրված էր 1000 եզ։ 1916 թվականի հունիսին Հայոց-Ձորի գյուղացիները Ամերիկյան կոմիտեին պարտք էին 1000 եզ, 50 ցուլ, 100 կով, 15.000 ռ. արժողությամբ սերմացու, մի քանի հարյուր մանգաղ և խոփ։ Վանում իրենց գտնվելու ընթացքում ամերիկյան ներկայացուցիչները Հայոց-Ձորի, Գավաշի, Փեսանդաշտի, Նորադուզի, Խոշապի և այլ վայրերի գյուղացիներին վարկով տվել են 3000 գլուխ գյուղատնտեսական անասուններ՝ 35.000 ռուբլի արժողությամբ, 1000 բահ, 2000 մանգաղ, 1500 արոր և խոփ, սերմեր՝ 50.000 ռուբլու արժողությամբ։ Այդ ապրանքների վարկային գինը զգալիորեն գերազանցում էր այն գինը, որով ամերիկացիները դրանք գնում էին Պարսկաստանում։ Ամերիկացիների ձեռքն ընկան Ծվատան և Արտամետ գյուղերի այգիները։

Ամերիկացիները հետաքրքրվում էին նաև ռազմական հարցերով։ Շատ ամերիկյան քաղաքներում ամերիկացիները զինվորական գործ էին սովորեցնում հայ պատանիներին, և պետք է ենթադրել, որ հենց այդ պատանիներից կազմվեց հայ կամավորների խումբը ԱՄՆ-ից, որը մասնակցում էր պատերազմին՝ դաշնակցական կամավորական խմբերի կազմում։ Ամերիկացիները կամենում էին օգտագործել նրանց դաշնակցական խմբերում ամերիկյան ազդեցությունը ուժեղացնելու համար։ Սակայն, երբ ցարական կառավարությունը ցրեց կամավորական խմբերը, այդ հայ երիտասարդները արդեն պետք չէին ամերիկյան կոմիտեին և կոմիտեն երեսը թեքեց նրանցից։

Ամերիկահայերը մտնում էին նաև այսպես կոչված «Վանի միլիցիայի» կազմում, որը ստեղծվել էր Վանի նահանգապետ գնդապետ Տերմենի նախաձեռնությամբ՝ գյուղատնտեսական աշխատանքների ժամանակ գաղթականների անվտանգությունը ապահովելու համար։ Քանի որ այդ միլիցիան չէր պահպանվում պետական գանձարանի հաշվին, ապա Ամերիկյան կոմիտեն Վիլսոնի միջոցով հայտարարեց, որ պատրաստ է ֆինանսական օգնություն ցույց տալու նրան։ Վասպուրականի գյուղական միլիցիային աջակցություն

---

[40] Տե՛ս «Վան-Տոսպ», 1916, № 26, էջ 13։

ցույց տալով, ամերիկացիները ցանկանում էին այն դարձնել իրենց շահերի հավատարիմ պաշտպան։

Արևմտահայերի գործերով զբաղվող դաշնակցական և այլ բուրժուա-նացիոնալիստական կազմակերպություններն իրենց կողմը գրավելու համար, Ամերիկյան կոմիտեն ժամանակ առ ժամանակ նրանց բաց էր թողնում որոշ քանակությամբ դրամ և պարեն։ Ամերիկյան կոմիտեի հետ գործակցում էին կղերական և բուրժուա-նացիոնալիստական տեղական կազմակերպությունները։ Իսկ արևմտահայ որոշ բուրժուական գործիչներ առաջարկում էին խնդրել ԱՄՆ-ից 100 մլն. դոլլարի փոխառություն։

Ամերիկյան կոմիտեի ներկայացուցիչները վարում էին նաև դիվանագիտական գործունեություն։ Սմիթը և Քրեսոնը որպես հյուպատոս և փոխ-հյուպատոս, վարում էին այն ի պաշտոնե, կոմիտեի այլ անդամները՝ համաձայն նրանց ցուցումների։

Ամերիկյան ներկայացուցիչներ Գրեյսը, Ռայնոլդսը, Յարոն ակտիվ մասնակցություն ունեցան «Թուրքահայերի համագումարին», որը բացվել էր 1917 թ. մայիսի 2-ին Երևանում, ընդ սմին Յարոն մտավ համագումարի ստեղծած, այսպես կոչված, «Վերաշինության հանձնաժողովի» մեջ։ Համագումարի ստեղծած խորհրդի գլխավոր նպատակը դարձավ, ըստ «Հայաստան» թերթերի հայտարարության՝ «...ամերիկացիներու պէս և ամերիկացիներու հետ աշխատանք կազմակերպել գաղթականների համար»։

Ամերիկյան կոմիտեի նկատմամբ ստրկական դիրք գրավեց 1917 թ. օգոստոսին ստեղծված հայ գաղթականական կազմակերպությունների գլխավոր խորհուրդը։ Հյուպատոս Սմիթի հետ 1917 թվականի նոյեմբերի 14-ին, իսկ նոյեմբերի 16-ին Կրեսոնի հետ ունեցած զրույցների ժամանակ, և այնուհետև Սմիթին հասցեագրված գրավոր հայտարարության մեջ գլխավոր խորհրդի ներկայացուցիչները ամերիկացիներից 4 մլն ռուբլու փոխառություն էին խնդրում։

Նվազ նշանակություն չէին տալիս ամերիկացիները Պետրոգրադում հայ-ամերիկյան բանկի հիմնադրմանը, որի կանոնադրությունը մշակվել էր 1917 թ. փետրվարին[41]։ Բանկի հիմնական կապիտալը պետք է կազմեր 150 մլն ռուբլի, որից 100 մլն կապիտալ ներդրումներ պետք է անեին ամերիկյան, իսկ 50 միլիոնի՝ ռուսահայ բանկիրները[42]։ Բանկը պետք է հող նախապատրաստեր Արևմտյան Հայաստանում ամերիկյան կապիտալի ֆինանսատնտեսական արմատավորման համար։ Այն պետք է վերահսկեր հայ բուրժուազիայի ձեռքում գտնվող զանազան բնույթի ձեռնարկությունների գործունեությունը։ Սակայն այդ բանկի ստեղծման նախագիծը այնպես էլ մնաց թղթի վրա, նրա իրականացմանը խանգարեց Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիան։

Ամերիկյան ներկայացուցիչները մեծ ուշադրություն էին նվիրում մանկատներ ստեղծելու գործին։ Այդ մանկատներում աշխատում էին հայ որբ երեխաներին ամբողջովին կտրել երկրում փոթորկվող ռևոլյուցիոն մթնոլորտից, և, դաստիարակելով նրանց ամերիկյան միլիարդատերերին երկրպագելու ոգով, դարձնել օտարերկրյա կապիտալի սպասարկուներ։

---

[41] Տե՛ս „Армянский вестник", 1917, № 7, стр. 21.

[42] Տե՛ս «Վան-Տոսպ», 1917, № 10, էջ 16։

Այդ նպատակով Ամերիկյան կոմիտեն իր միջոցներից որոշ գումար առանձնացնում էր որբերին պահելու համար։

1917 թվականի մարտի 15-ին Ռայնոլդսը, Յարոն, Մայնարդը Քրեսոնի միջոցով հաղորդում էին Նյու-Յորքի կոմիտեին, որ նրանց առաջիկա տարում անհրաժեշտ է մեկ միլիոն դոլլար, որի իրացումը նրանք հետևյալ կերպ էին պլանավորում. բրդի և բամբակի գնման համար 250 հազ. դոլլար, բանվորների վարձատրման համար 200 հազ. դոլլար, որբերին պահելու համար 250 հազար դոլլար, որբանոցային արհեստանոցների համար 50 հազար դոլլար, արհեստավորներին վարկավորելու համար 150 հազ. դոլլար, հիվանդներին, կույրերին, հաշմանդամներին, ~~անվանվածներին~~ 75 հազ. դոլլար։ Մնացած 25 հազ. դոլլարը Ամերիկյան կոմիտեի անդամները, հավանաբար իրենց պետքերի համար էին թողնում[43]։

Այս տվյալներից պարզ երևում է, թե ինչ ուղղությամբ էին ծախսվում Ամերիկյան կոմիտեի դրամական միջոցները։ Բացի հաշմանդամներին օգնություն ցույց տալու համար նախատեսված 75 հազար դոլլար համեմատաբար փոքր գումարից, միջոցների մնացած մասը տրամադրվում էր մեկ հիմնական նպատակի՝ հող նախապատրաստել Արևմտյան Հայաստան ամերիկյան կապիտալի հետագա ներթափանցման համար։

Այդ կապակցությամբ տեղին է հիշել ԱՄՆ-ի կառավարության հատուկ լիազոր առևտրական գործակալ Վիլյամ Չեպին Դունտինգտոնի 1916 թվականի օգոստոսին Թիֆլիսում արված հայտարարությունը այն մասին, որ նահանգները ցանկանում են Ռուսաստանի հետ անմիջական հարաբերությունների մեջ մտնել և պատրաստ են արտահանել ինչպիսի ապրանք ուզեն, նույնիսկ կապիտալ։ Նահանգների դրությունը այնպիսին է, ասում էր Դունտինգտոնը, «որ նրանք հարկադրված են հոգ տանել այն մասին, թե ուր արտահանել այդ ապրանք-կապիտալը»[44]։

Եվ ամերիկյան ներկայացուցիչների ամբողջ գործունեությունը արևմտահայերի շրջանում 1915—1917 թվականներին ուղղված էր այն բանին, որ ճանապարհ հարթեն ամերիկյան այդ «ապրանք-կապիտալի» համար։

Վերը նշված փաստերից երևում է, որ Արևմտյան Հայաստանի տնտեսական ստրկացման իրենց պլանները ամերիկացիները ձգտում էին իրականացնել տարբեր ճանապարհներով։

Ամերիկյան ֆաբրիկաների և արհեստանոցների հիմնադրում, որոնցում շահագործվում էր տեղական բնակչության էժան բանվորական ուժը, Արևմտահայաստանի շուկայի օգտագործումը ամերիկյան ապրանքների համար, երկաթուղիների կառուցման և երկրամասի հանքային հարստությունների շահագործման նախագծումները, արևմտահայ գյուղացիությանը գյուղատնտեսական գործիքներ տրամադրելը՝ վարկերի ձևով, հայ բուրժուա-նացիոնալիստական կազմակերպությունների վրա իրենց ազդեցությունը ուժեղացնելու նպատակին ուղղված գործունեություն—ահա հիմնականը այդ ուղիներից։

Սակայն տեղի ունեցող պատմական դեպքերի և առաջին հերթին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հետևանքով կրախի մատնվեցին Արևմտյան Հայաստանի տնտեսական ստրկացման ամերիկյան պլանները։

---

[43] Տե՛ս «Կոչնակ», 14 ապրիլի, 1917, № 15, էջ 469։

[44] „Кавказское слово", 28 августа 1916, № 191, стр. 2.